ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԵՏԵՎՅԱԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մարմին՝ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**

Թափուր հաստիք՝

Հայտարարագրման բաժնի գլխավոր մասնագետ /41-27.1-Մ1-3/,

Ծանոթություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի Հայտարարագրերի վերլուծության վարչությունն իրականացնում է պաշտոնատար անձանց գույքային դրության համալիր վերլուծություն: Վերլուծության արդյունքում վեր են հանվում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը, պաշտոնատար անձանց գույքի փոփոխությունը համադրվում է եկամուտների, ինչպես նաև տարբեր պետական մարմիններից և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության հետ (այդ թվում՝ հարկային և բանկային գաղտնիք կազմող), իրականացվում է ՀՀ քաղաքական կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տվյալների արժանահավատության ու ամբողջականության ստուգում, իրականացվում են օրենքով սահմանված այլ գործառույթներ:

Աշխատանքի վայրը՝ **ք. Երևան, Կորյունի 15**

Անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ

- Բարձրագույն կրթություն (ցանկալի է՝ տնտեսագիտություն կամ հաշվապահական հաշվառում կամ աուդիտ կամ ֆինանսներ մասնագիտությամբ)
- հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ ֆինանսավարկային բնագավառում բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ,
- անգլերեն լեզվի լավ իմացությունը ցանկալի է,
- տվյալների բազայի հետ աշխատանքային փորձը ցանկալի է,
- MS Excel ծրագրի լավ իմացություն,
- վերլուծական հմտություններ,
- հակակոռուպցիոն ոլորտում աշխատելու մեծ մոտիվացվածություն:

Նշված պաշտոններին հավակնող անձինք պետք է լինեն բարեկիրթ, պարտաճանաչ, նախաձեռնող, պատասխանատվության մեծ զգացումով, ունենան արագ սովորելու, առաջադրված խնդիրները սեղմ ժամկետներում կատարելու ունակություններ:

Հանձնաժողովն օրենքով ստեղծված մարմին է, որին տրված գործիքակազմով պատրվիրակված է կանխարգելելու մեր երկրում կոռուպցիոն դրսևորումները:

Մանրամասների համար հետաքրքրված անձիք անցնել սույն՝ https://cso.gov.am/internal-external-competitions/1682/view հղումով կամ զանգահարել 012-77-77-24 հեռախոսահամարին:

Խնդրում ենք այս հայտարարությունը տարածել Ձեր ընկերների շրջանակներում: Եթե գիտեք համապատասխան թեկնածուի կամ աշխատանք փնտրող և նորը սովորելուն ձգտողի, խնդրում ենք կիսվել սույն նամակով: Շնորհակալություն: